

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

(Մահվան 50-ամյակի առթիվ)

Հակասական և որոնումներով լի եղավ երիտասարդ Պերճ Պրոշյանի կյանքի ուղին, մինչև նրա ստեղծագործական ինքնահաստատման հասնելը, այսինքն՝ մինչև այն բանի գիտակցությունը, որ իր տեղն ու դերը հասարակական կյանքում գեղարվեստական արձակն է: Ավարտելով ծննդավայր Աշտարակի քառամյա ծխական, ապա Մուղնու վանական դպրոցները, ուսման պական ամբողջացնելով Թբիլիսիի համբավավոր Ներսիսյան դպրոցում, քսանամյա Պրոշյանը 1857 թ. վերադառնում է Աշտարակ, ազգային, կրթական ու մշակութային բնույթի եռանդուն գործունեություն ծավալելու համար: Այդ նպատակով նա տարբեր տարիների տևողություն ունեցող դպրոցներ է հիմնադրում ինչպես իր ծննդավայրում, այնպես էլ Շուշիում, Ագուլիսում, Աստրախանում, Թիֆլիսում, մշակում է աշխատանքային կանոնադրություններ այդ դպրոցների համար, սահմանում է ուսուցիչների վարձատրության սկզբունքներ: Զբաղվում է նաև թատրոնով և թատերական խմբեր է կազմակերպում Թիֆլիսում, Աշտարակում և այլուր, նրանց համար համապատասխան դերացանկ է մշակում, ապահովում է հյուրախաղեր Կովկասի զանազան քաղաքներում, հանդես է գալիս ազգային բեմադրությունները խրախուսող հոդվածներով: Ազգի առաջադիմության համար կարևոր է արհեստների ուսուցումը, – չի հանգստանում Պրոշյանը, – և շուտով Աշտարակի իր հայրական տան մի սենյակում սկսում է գործել աղջիկների կար ու ձևի խմբակ, իր՝ Պերճ Պրոշյանի ղեկավարությամբ: Ինչպես հայտնի է, Պրոշյանը ծնվել էր դերձակի ընտանքում, և բավականին լավ էր տիրապետում այդ մասնագիտությանը: Չմոռանանք ավելացնել, որ այս տարիներին նա հանդես էր գալիս աշխարհաբար բանաստեղծություններով, որոնք տպագրվում էին ժամանակի պարբերականներում և մանավանդ «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում:

Այսպես շարունակվեց երկար տարիներ, և դժվար է ասել, թե իր սիրելի ազգակիցներին օգտակար լինելու ցանկությունը էլի ինչ ճանապարհների կմղեր

Պռոշյանին, եթե բախտորոշ 1858 թվականին իր բարեկամ Հովհաննես Տեր-Հովսեփյանի տանը Պռոշյանը պատահաբար չտեսներ Խաչատուր Աբոյանի՝ նոր հրատարակված «Վերք Հայաստանի» պատմավեպը:

Առանձնանալով մի անկյուն՝ նա սկսում է գրքի ընթերցումը, ընթերցում, որն աստիճանաբար վերածվում է ինքնամոռաց հափշտակության. «Կարդում եմ, – հետագայում գրում էր Պռոշյանը, – կատարյալ քաղցած գայլի անկշտությամբ, որը ճանկել է համեղ որսը և ուզում է բոլորը կուլ տալ, որ չլինի, թե ուրիշներին էլ բաժին մնա: Հետևյալ օրը խանութից թուղթ ու թանաք գնեցի, փոնչու մոտից հինգ կոպեկի հաց առա և ողջ օրը սենյակիցս դուրս չեկա: Ծունկս սեղան էի շինել և գրում էի: «Սոս և Վարդիթերն» էի գրում»:

Այսպես ուրեմն, Պռոշյանը վեպ է գրում, գաղափարական առաջնորդ ունենալով Աբովյանի անմահ երկասիրությունը: Եվ մոտ մի տարի տևող քրտնաջան աշխատանքից հետո, Թբիլիսիի «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը հատվածաբար սկսում է հրատարակել նրա գրական երախայրիքը, որը նույն՝ 1860 թվականին հրատարակվում է առանձին գրքով:

Պռոշյանի նախընտրած թեման գյուղն է ու գյուղական իրականությունը, ավելի կոնկրետ՝ իր ծննդավայր Աշտարակը: Մի միջավայր, որը նա գիտեր ամենայն մանրամասնությամբ: Այստեղից էլ գալիս է «Սոս և Վարդիթերի» գեղարվեստական համոզականությունը, հայկական գյուղաշխարհին բնորոշ բարքերի ու սովորությունների նկարագրության բացառիկ ռեալականությունը: Պռոշյանը ստեղծագործորեն հայտնաբերեց իր աշխարհը, կարողացավ նկատել ժամանակի բնորոշ մարդկանց, գտավ իր համակրելի կերպարներին: Սակայն գրողը մտադիր չէր սահմանափակվել գյուղական կյանքի իդիլլիկ փառաբանությամբ: Նա նկատում է, որ այդ պարզ, նահապետականորեն ազնիվ ու միամիտ իրականության մեջ սկսել են ներթափանցել ինչ-որ չբացատրվող ու չպարզաբանվող ուժեր, որոնք տարօրինակ հաստատակամությամբ երկփեղկում են գյուղական աշխարհը, բարեկամներին դարձնում են թշնամիներ, ընկերներին՝ հակառակորդներ: Եվ հասկանալի է, որ

գյուղական կյանքը և այնտեղ մուտք գործած հակասությունները այդպիսի հմտությամբ վերարտադրող գիրքը չէր կարող վրիպել ժամանակի գրական քննադատության ուշադրությունից: Այս իմաստով Պոռոշյանի «Մոս և Վարդիթերին» բացառիկ ճակատագիր վիճակվեց. գրքի լույս տեսնելուց մոտ երեք տարի անց «Կրիտիկա Մոս և Վարդիթերի» վերնագիրը կրող ընդարձակ գրախոսականով, հանդես եկավ Միքայել Նալբանդյանը: 1863 թվականին, Պետրոպավլովյան ամբոցում բանտարկված Միքայել Նալբանդյանը իր բարեկամների օգնությամբ ստանում է գիրքը և մոտ մի տարվա քրտնաջան աշխատանքից հետո ավարտում է իր ուսումնասիրությունը: Ավելացնենք, որ հայ գրականագիտական մտքի այդ ուշագրավ դրսևորումը երկարատև որոնումներից հետո, որոնումներ, որոնց մասնակցում էր նաև ինքը՝ հեղինակը, վերջնականապես հրապարակ եկավ շուրջ յոթանասուն տարի հետո միայն, 1935 թվականին:

«Մոս և Վարդիթեր» վեպը բազմաթիվ խորհրդածությունների առիթ է տվել Նալբանդյանին: «Կրիտիկայում» գրական-գեղագիտական ամենազանազան հարցերի հետ, նա արծարծել է փիլիսոփայական, հասարակական և ազգային-քաղաքական մեկից ավելի կարևորագույն խնդիրներ, որոնք իրենց ուղղակի աղերսներն ունեին 60-ական թվականների ռուսական հեղափոխական-դեմոկրատական մտքի հետ:

Պոռոշյանի հետագա ստեղծագործական կյանքը ընդհանուր առմամբ վերելքի կորագիծ լինելով հանդերձ, աչքի է ընկնում իր անկազմակերպվածությամբ: Շուրջ քսան տարվա ընդմիջումից հետո՝ 1863 թվականին, նա գրում է «Աղասի» ողբերգությունը, իսկ դրանից ևս տասներեք տարի անց՝ 1870 թվականին, «Կովածաղիկ» վեպը: Երկու գործերն էլ ուղիղ թելով կապվում էին Աբովյանի «Վերջ Հայաստանի» պատմավեպի հետ, մի բան, որը առաջաբաններում խոստովանում է հենց ինքը: Ներկա դեպքում առանցքային տարբերությունն այն է, որ Պոռոշյանը, շարունակելով իր իսկ հայտնաբերած գրական ուղին՝ պատկերել կյանքը ինչպես որ կա, առանց հավելումների, ավելի ամրապնդեց և իր տեղում հաստատեց գրական նոր ծլարձակող ուղղությունը՝ ռեալիզմը:

«Կովածաղիկից» հետո ևս երեք տարի պահանջվեց Պոռոշյանից հաջորդ՝ «Հացի խնդիր» վեպը լույս աշխարհի հանելու համար: Եվ չնայած կյանքի աննախանձելի

պայմաններին՝ «հաց հանապազօրի» հրամայականին, վիպասանը կարողացավ ընթերցողների սեղանին դնել մի գործ, որին վիճակված էր դառնալ հայ գրականության աչքի ընկնող երևույթներից մեկը: Այն նպատակը, որ իր առջև դրել էր Պոռշյանը հիշյալ վեպը կյանքի կոչելու համար, առավել քան համեստ էր: Նա որոշել էր, իր բառերով ասած՝ «Բուն Բարեկենդանից մինչև Ծաղկագարդը ընկած հայ ժողովրդյան Բարբառի՝ առածների, ավանդությունների և ծեսերի կարգը գրի առնել»: Այս ամենն, իհարկե, լիապես արտացոլված է «Հացի խնդրում», բայց վեպն ամենևին էլ միայն դրանով չի սահմանափակվում: Հայկական հասարակական կյանքում տեղի են ունեցել նոր հեղափոխումներ՝ Արևելյան Հայաստանը անցել է Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, բայց սա էլ չի լուծել հայ ժողովրդի ազատագրության փայփայելի իդեալը: Ավելին, գյուղաշխարհում հայտնվել են նոր հասկացություններ՝ ուրյադնիկ, ստարշինա, գլավա, մովրով, յասաուլ, որոնք, սակայն, միայն այն են անում, որ ավելի են վատթարացնում գյուղացու վիճակը: Բնականոն հետևանքն այն է եղել, որ հիմնովին քայքայվել է հայկական նահապետական գյուղը, պղծվել են մարդկային միամիտ, պարզ հարաբերությունները: Սոցիալական այս դրաման գեղարվեստորեն մարմնավորված է երկու անհատների՝ Խեչանանց Խեչանի և Միկիտան Սաքոյի բախմամբ, որոնցից առաջինի ուժը սոսկ հեղինակի համակրանքի մեջ է, իսկ երկրորդինը՝ կյանքի զարգացման անբեկանելի օրինաչափության: Նահապետական գյուղացի է Խեչանը, իր արդար վաստակով մեծ հարստություն ձեռք բերած, կյանքի չարին ու բարուն հավատացող: Եվ նրա զարմանքին չափ չկա, երբ նկատում է իրենց միջավայրում բուն դրած Միկիտան Սաքոյին, որը հարստանում է՝ առանց աշխատելու, որը կյանքում տեղ ունի՝ առանց իրենից որևէ բան ներկայացնելու, որը տակնուվրա է անում ամբողջ գյուղը, առանց որևէ մեկից քաշվելու: Այդպիսին է Միկիտան Սաքոն՝ «Հացի խնդիր» վեպի և, առանց չափազանցության, մեր նոր գրականության դասական դարձած կերպարներից մեկը, մի հերոս, որը լիովին կարող է կանգնել Րաֆֆու Ճանճուր Իվանիչի, Սունդուկյանի Զամբախովի ու Զիմզիմովի, Օտյանի Ղուկաս Աղայի և այլոց կողքին:

Պոռշյանի հետագա ստեղծագործական կյանքը քիչ ավելի բնականոն հունի մեջ է ընկնում: 1887 թ. նա վերադառնում է Թիֆլիս, սկսում է պաշտոնավարել տեղի

Ներսիսյան դպրոցում և այսպիսով լավ-վատ կարողանում է կարգավորել իր ընտանիքի տնտեսական վիճակը: 1880 թ. ասպարեզ է գալիս «Ցեցեր» վեպը, որը նախօրոք, որպես ամսագրային թերթոն, հրատարակվում է Ավետիք Արազխանյանի «Մուրճ» ամսագրում: Մի տարի անց, դարձյալ նույն ամսագրում, սկսում է հրատարակվել Պոռոջյանի «Բողոք», որն առանձին գրքով լույս է տեսնում 1890 թվականին, դրանից էլ մի որոշ ժամանակ անց, 1900 թ. Արազխանյանի նույն «Մուրճ» պարբերականը սկսում է տպագրել «Հունոն» վեպը, որն առանձին հրատարակության բախտին է արժանանում մի տարի հետո և այլն: Ավելացնենք սրան բազմաթիվ պատմվածքները, որոնք առատորեն հրատարակվում էին ժամանակի պարբերականներում և որոնցից «Գյուղական վարժապետներ», «Ադամա մուրճ», «Մեր Խեչոն», «Որսորդ Բաղդոն», «Խելագարը» և էլի ուրիշները, ուշագրավ են առ այսօր:

«Իմ էսքան տարվա գործիս համար ազգը մի կիսաբերան շնորհակալություն էլա որ ասի՝ ես հանգիստ հոգով գերեզման կմտնեմ», մի առիթով գրում էր Պերճ Պոռոջյանը: Եվ այսօր, ականավոր արձակագրի մահվան 50-ամյակի առթիվ ուրախությամբ կարելի է արձանագրել, որ երախտագետ հայ ժողովուրդը պարտազանց չեղավ իր մեծ զավակի նկատմամբ: Պոռոջյանին նվիրված՝ Արամ Ղանալանյանի («Պոռոջյանը և ժողովրդական բանահյուսությունը», Երևան, 1938 թ.), Արսեն Տերտերյանի («Պերճ Պոռոջյան», անդ, 1955 թ.), Արշալույս Բաբայանի («Պերճ Պոռոջյան, անդ, 1962 թ.), Սարիբեկ Մանուկյանի («Պերճ Պոռոջյան», անդ, 1964 թ.) և այլոց աշխատությունները, պարբերականներում հրատարակված բազում հոդվածները գալիս են հենց դա ապացուցելու:

Հայկական հանրապետության Նաիրի շրջանում է գտնվում «Պոռոջյան» ավանը, որի արտադրանքները լայնորեն հայտնի են ամենուր: Մեր հանրապետության Մինիստրների խորհրդի որոշմամբ, 1948 թվականին Աշտարակում Պոռոջյանի տանը հիմնադրվեց նրա անունը կրող տուն-թանգարան, որի առաջին տնօրենն էր սովետահայ գրող Վահրամ Ալազանը: Տուն-թանգարանը գոյություն ունի առ այսօր: Մեր հանրապետության քաղաքներում մեկից ավելի են դպրոցները, որոնք ունեն Պոռոջյանի անունը, պակաս թիվ չեն կազմում նրա անունը կրող գրադարաններն ու ընթերցարանները, փողոցները: Ընթերցողների սեղանին է դրված, վերջապես, նրա

երկերի յոթհատորյակը (1962-64 թթ.) և գեղարվեստական ստեղծագործությունների
եռհատորյակը (1974-79):

Այո, հայտնի ասույթի խոսքերով ասած՝ մշակն արժանի էր իր վարձին...

Երևան, 1957, № 47, դեկտեմբերի 5